ներկայացնում «ՀՀ վարչապետի 2002 թվականի սեպտեմբերի 16-ի N 532-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<> ---------- 2017 թվականի N------ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 532-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածը.

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2002 թվականի սեպտեմբերի 16-ի <<Ձրի ազգային խորհրդի կանոնակարգն ու կազմը հաստատելու մասին>> N 532-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված 1-ին հավելվածում՝

- 5-րդ կետի «դ» ենթակետը «աշխատանքը» բառից հետո լրացնել «, որոշում է ընդունում հարցման կարգով խորհրդի նիստ հրավիրելու վերաբերյալ:» բառերով.
- 7-րդ կետի «ա» ենթակետը «պատրաստումը» բառից հետո լրացնել «այդ թվում՝ հարցման կարգով հրավիրվող» բառերով.
- 8-րդ կետի «գ» ենթակետը «լիազորություններ» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ հարցման կարգով)» բառերով.
- 9-րդ կետը «նիստերի» բառից հետո լրացնել «և հարցման» բառերով.
- լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 10.1-րդ կետ.

«10.1. Հարցման կարգով խորհրդի նիստ հրավիրելու դեպքում խորհրդի քարտուղարը խորհրդի նախագահի հետ համաձայնեցված օրակարգի

նախագիծը խորհրդի անդամներին գրավոր ներկայացնում է հարցման: Օրակարգը հաստատվելու դեպքում՝ խորհրդի քարտուղարը օրակարգում ընդգրկված հարցերի նյութերը գրավոր ներկայացնում է խորհրդի անդամներին: Խորհրդի անդամները, խորհրդի նախագահի կողմից սահմանած ժամկետում, խորհրդի քարտուղարին ներկայացնում են գրավոր դիրքորոշում՝ հստակ նշելով հարցերից յուրաքանչյուրին «կողմ» կամ «դեմ» լինելու վերաբերյալ: Խորհրդի նախագահի կողմից սահմանած ժամկետում գրավոր դիրքորոշում չներկայացնելու կամ ներկայացված գրության մեջ հարցերի վերաբերյալ հստակ դիրքորոշում չներկայացնելու դեպքում՝ խորհրդի անդամի դիրքորոշումը տվյալ հարցի վերաբերյալ համարվում է դրական:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: